## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՈԿՀ-2020 ՄՄԿ

ք. Երևան « 10 » ------01------ 2020 թ.

ՀՀ ոստիկանությունը, ի դեմս ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Վ.Մովսիսյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և <<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ-ը, ի դեմս պետ, ոստիկանության գեներալ մայոր Մ. Բաբայանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի 09.03.02.01..«Միջին մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակներում <<ՀՀ ոստկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի միջին տարեկան թվով 130 սովորողի համար հաշվարկված, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

### 2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. . Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է 387451200 ( երեք հարյուր ութսունյոթ միլիոն չորս հարյուր հիսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով` սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող թիվ 1 հավելվածին համապատասխան:

### 3.ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

### 4.ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

4.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

ՀՀ ոստիկանություն

ք. Երևան, Նալբանդյան 130

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01533334

Հ/Հ 900011159275

ՀՀ ոստիկանության պետի տեղակալ

------------------------------- Վ. Մովսիսյան

Կ.Տ

**Կ ա տ ա ր ո ղ**

<<ՀՀ ոստիկանության կրթահամալիր>> ՊՈԱԿ

ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29

ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

ՀՎՀՀ 01806293

Հ/Հ 900018005018

Պետ ------------------------------- Մ.Բաբայան

ԿՏ

Հավելված N 1

«10» 01 2020 թ. կնքված

N ՀՀ ՈԿՀ-2020 ՄՄԿ պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

/ հազ.դրամ/

| NN | Ծառայության անվանումը | Ֆինանսավորումը 2020թ. ընթացքում՝ ՀՀ 2020թ. պետական բյուջեից /աճողական կարգով/ | | | | | | | | | | | | Ընդամենը տարեկան |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | ոստիկանության ծառայողների միջին մասնագիտական կրթություն | 32287,6 | 64575,2 | 96862,8 | 129150,4 | 161438,0 | 193725,6 | 226013,2 | 258300,8 | 290588,4 | 322876,0 | 355163,6 | 387451,2 | 387451,2 |

**Պատվիրատու**

ՀՀ ոստիկանություն
ք.Երևան, Նալբանդյան 130
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՎՀՀ 01533334
Հ/Հ 900011159275

------------------------------ Վ. Մոսիկյան
/ՀՀ ոստիկանության պետի տեղակալ/

Կ.Տ

**Կատարող**

«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ
ք.Երևան, Իսակովի 29
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900018005018
ՀՎՀՀ 01806293

------------------------------ Ս.Բաբայան
/«ՀՀ ոստիկանության կրթահամալիր» ՊՈԱԿ-ի պետ/

Կ.Տ